

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս Ի Ս Ի Ա Ն.

Զանգեզուրի գաւառը, որ Հայոց տիրապետութեան ժամանակ մարմնում էր Սիւնեաց աշխարհի մի մասը՝ այժմ ընկնում է Սլիսապետովի (Գանձակի) նահանգի մէջ, Նրա սահմաններն են—արեւելքից և արեւելահայաստանի՝ Զիքրավիլի և Շուշու գաւառները, հիւսիսից Զիվանշիրի գաւառը, արեւմուտքից և արեւմտահայաստանի՝ Դարալագեապի և Նախիջևանի գաւառները, և հարաւից ու արեւելահայաստանի՝ Արաքս գետը, որ միանգամայն սահմանագիծ է Ռուսաստանի և Պարսկաստանի մէջ:

Այս ընդարձակ գաւառը բնում է 137,32 քառ. մղոն տարածութիւն և ստորաբաժանում է չորս ռաւոյկանական մասերի—Սիսիան, Զանգեզուր, Ղափան և Մեղրի: Սրանցից առաջինը կազմում է մեր այժմեան հետազոտութեան շրջանը:

Սա հին ժամանակ ստորաբաժանուած էր երկու մասի. արեւելահայաստանի մասը կոչւում էր Մղուկ, իսկ արեւմտահայաստանը, այժմեան Բաղարքենայի մասը՝ Ալլախ:

Մղուկը կոչուած է նաև Սիւնիք կամ Սիսական, որպէս Սիւնեաց իշխանների բուն գահատեղի: Այս անունը ծագում է, Մ. Խորենացու ասելով՝ Գեղամի որդի Սիսակից, իսկ Հայր Ալիշանի կարծիքով՝ աւանդական Սեւուկ նահապետից, որից առաջացել է Սեորդեաց ազգը և որի անունով էլ թերեւ Գեղամայ լինը կոչուել է Սեան: Սիսական անունը, փոքր ինչ փոխուած, մինչև այժմ էլ մնացել է Մղուկի գաշտակին մասի վրայ, որ կոչւում է Սիսիան:

ՍԻՒՆԵԱՅ ՄԵՏՐԱՊՈԼՏՈՒԹԻՒՆ.

Մղուկ գաւառը Սիւնեաց աշխարհի այն մասն է, որ միջազայր է կազմել կրօնական կեանքի զարգացման, մինչդեռ քաղաքական կեանքը թէև սկիզբն է առել նոյն այս գաւառում՝ սակայն շուտով հեռացել է այստեղից և կենդրոնացել Բաղք և Կապան գաւառներում: Ուստի և ներկայ դրբի մէջ մենք համառօտ կերպով կը պատ-

մենք Սիւնիքի մետրապոլիտոսիան պատմութիւնը, իսկ քաղաքական պատմութիւնը կը թողնենք վերոյիշեալ զաւառների ուսումնասիրութեան միջոցին անելու։ Սակայն որովհետեւ վերջին դարերում այս զաւառները գրեթէ միմեանցից անկախ կառավարուել են առանձին մելիքական տներով, ուստի և մենք առանձին առանձին կը պատմենք այդ մելիքների գործերը, քաղելով առանկապէս բանաւոր և մասամբ դրաւոր աղբիւրներից։

Աւանդութեան ստելով՝ քրիստոնէութիւնը Սիւնիքում քարոզել է նախ Ս. Բարթողիմէոս առաքեալը, և լետով, Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակ, Տրդատի հետ մկրտուել է և՛ Սիւնեաց իշխանը։ Սա Լուսաւորչի հետ գնացել է Կեսարիա և վերադառնալիս Տարօնում, Գիսանեան կղքերի քրմերի դէմ մղած պատերազմում, մեծ քաջութիւններ է արել, ապա խնդրել է Տրդատից և Ս. Գրիգորից մի ուսուցիչ իւր նահանգի համար, և ստանալով Ս. Գրիգորի բերած մի ասորի հոգևորական՝ զայիս է իւր աշխարհը, ուր մկրտում են նրա ամբողջ ընտանիքը և բոլոր ժողովուրդը։

Նա, իշխանը, քանդում է կռատունները և պատրաստում է նրանց տեղ եկեղեցիներ շինելու՝ երբ կանչւում է Ս. Գրիգորի և Տրդատի հետ միասին չուով գնալու։ Վերադառնալուց լետով Ս. Գրիգորի հետ միասին շրջում է ամբողջ Սիւնեաց երկիրը և պատշաճաւոր տնդերում եկեղեցիներ շինում։ Ս. Գրիգոր վերադառնալով Վաղարշապատիւր մերձաւոր աշակերտներից մէկին, Գրիգորիս անունով, սալը ճշմարիտ և լաւ, լի ամենայն հմտութեամբ, տալիս է այս իշխանին, որ տանի ավիճակեցուցանել լեպիսկոպոսութիւն աշխարհին Սիւնեացոյ։ Եւ ահա այս Գրիգորիսից է սկսում Սիւնեաց եպիսկոպոսութիւնը։

Արշակ Բ.-ի ժամանակ Գրիգորիս Սիւնեաց եպիսկոպոսը, ազլուխն եպիսկոպոսացն Հայոցոյ, Ներսիսի հետ միասին գնաց Կեսարիա, վերջինիս կաթողիկոս ձեռնադրելու, և սրա համար էլ՝ վերադարձին մեծամեծ պատիւներ ստացաւ։ Ներսէս տունը նրան սրահմական ոսկեթելը, և Սիւնիքը նախաթոռ կարգեց, որ հռոմ լեզուով կոչւում է պառտոփրանտէս։

Գրիգորիսին լաջորդեց Մաշտոցը, որ մի, քանի տարուց լետով վախճանուեց և այնուհետեւ եպիսկոպոսական աթոռը մի առժամանակ թափուր մնաց, որի պատճառը հետեւեալն էր։

Սիւնեաց առաջին եպիսկոպոսները նստում էին Շաղատ գիւղը, որ միննոցն ժամանակ և իշխանանիստ էր։ Արշակի բանտարկութիւնից լետով, երբ Սիւնեաց երկիրն անցաւ Պարսից ձեռքը՝ Սիւնեաց տէր Անդոկ իշխանը, փառանձեմ թագուհու հալըր, պարսից

արքունիքումն էր լինում: Այստեղ մի անգամ հայ նախարարների բարձերը որոշելիս՝ Շապուհ Բ. տասն չորսերորդ տեղը տուեց Անդրկին: Սա իրան անպատուած համարելով՝ չմասնակցեց ուրախութեան սեղանին: Իսկ քիչ լետոյ, երբ Շապուհ Բ. զնաց Խաղիրների ղէմ պատերազմելու՝ Անդոկը 1700 հոգով լարձակուեց թագաւորանիստ Տիւրքոնի վրայ, կողոպտեց և փախաւ:

Եւ որպէսզի իւր երկիրը Շապուհի վրէժնդրութեան աւար չդառնայ՝ հրամայեց իւր հպատակներին, որ իրանց զուքերը պահեն և փախչեն: Ուստի և Սիւնիքի բոլոր գաւառներից հաւաքեցին թանկագին խաչերն ու սրբերի մասունքները, զրին Շաղատի սքարկոփ և զմեթաւորո եկեղեցու մէջ և հողով ծածկելով՝ իրանք ցրուեցան դանազան տեղեր:

Կարճ միջոցից Պարսից զօրքը լցուեց Սիւնիք, քանդեց աւերեց երկիրը և երբ եկաւ Շաղատ՝ մի քանիսը բարձրացան եկեղեցաբլուրի վրայ, բայց սլանկարծօրէն թնդին որոտման շարժումն եղև, և լեկեղեցաբլրէն արտաքս ձգեալք՝ վերելեալքն պարսից սատակեցան: Որից ահաբեկուելով՝ պարսից զունդը փախաւ, առանց ձեռք տալու եկեղեցուն: Իսկ Անդոկ իշխանը զնաց Թէոդոս կալսեր մօտ, ուր պատրկաց պատրիկ տիտղոս ստացաւ և մնաց այնտեղ մինչև իւր մահը: Նրա միակ որդին Բաբիկը, կամենալով վերստին ժառանգել իւր հալրենական երկիրը՝ ծպտած եկաւ Պարսից Շապուհի արքունիքը:

Այստեղ իւր քաջութեամբը հռչակ ստացաւ և մենամարտի դուրս գալով Հոնաց Հոնագուր հսկալի հետ, որ ասպատակում էր պարսից երկիրները՝ նրան սպանեց:

Ապա՝ որպէս վարձատրութիւն խնդրեց Շապուհ Բ-ից, որ վերցնել տայ դարպասի մօտ դրուած սանդը, որի մէջ պարսիկները մոխիր ածելով ծեծում էին և ասում. «Սիւնեաց տէրանցն նախադահութիւն տէրութեանն ընդ այս մոխիրս ի վալր լիցի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կենացն»:

Շապուհ Բ. զարմանալով, որ նա Անդոկի որդին է՝ կատարեց նրա խնդիրը և միննոյն ժամանակ վերադարձրեց նրան իւր հալրենի երկիրը:

Բաբիկը եկաւ Շաղատ գիւղը, և երբ բլուրն էր բարձրանում՝ մի եղջերու վազեց նրա առաջից: Բաբիկը հետեց նրան, սակայն սա բարձրացաւ եկեղեցաբլուրը, ուր ձիու ոտքը խրուեց գետնի մէջ, իսկ եղջերուն լանկարծ աներևոյթացաւ: Սրբ ձիու ոտքը դուրս քաշեցին՝ տեղից անուշահոտութիւն բուրեց: Այս բանի վրայ զարմանալով՝ Բաբիկը քանդել տուեց բլուրը և գտաւ «քարկոփ չքնաղաչէն» եկեղեցին:

Այս գիւտը ալնքան նշանաւոր էր, որ ախուհետեւ ամենայն տարի հաւաքուած էին ալստեղ և տօնուժ եկեղեցու երևման օրը, «իբրեւ զմալը եկեղեցեաց աշխարհին ամենայն Սիւնեացոյ»։

Որովհետեւ ալդ օրը աղօթողների ամեն մի խնդրուածք կատարուած էր՝ ուստի Բաբելի հետ եկած Գոր և Գաղան պարսիկ եղբայրներն հաւատացին և իրանց գնդերով ընդունեցին քրիստոնէութիւն։ Բաբել վիճակ ձգելով՝ տուեց Գաղանին՝ Շաղատ գիւղը՝ «նանդերձ եկեղեցեաւն, որ լայնժ ժամանակի Մալր եկեղեցեաց անուանէին», Տիրոտ սքանչելագործ քահանային էլ վանական և սպասաւոր կարգեց։

Այս Տիրոտի մասին իւր ժամանակին շատ աւանդութիւններ են կազմուել, որոնցից մի քանիսը մինչև այժմ էլ մնացել են ժողովրդի մէջ։ Այսպէս մինք լսել ենք Շաղատի ալժմեան բնակիչներից, թէ ժամանակով մի քահանայ է եղել, որ մի անգամ անցնելով գիւղի մօտակա լճակի մօտով՝ հրամայել է գորտերին, որ լռեն, և նրանք հնազանդել են իրան։ Միևնոյն աւանդութիւնը պատմուած է նաև Օրբէլեանը։ Այս Տիրոտը կարգադրել էր, որ կանայք չմտնեն ալդ Ս. Ստեփանոս կոչուած եկեղեցին և կանամբի քահանայք էլ սպասաւորութիւն չանեն ալստեղ. և այս կարգերը 300 տարի շարունակ պահպանուել են։

Ս. Մեսրոպը իւր քարոզութիւնների ժամանակ եկաւ Սիւնիք և արմատախիլ արեց հեթանոսական կրօնի մնացորդները։ Արապականերոտ Անանիան կարգուեց Սիւնեաց եպիսկոպոս։ Սա ս. Մեսրոպի հետ միասին հնարեց Աղուանից տառերը, ուստի և Աղուանից Սովաղէն թագաւորը պարգեւեց նրան ալիւր նշանակն թագաւորական ոսկետուտն վառիւ, և ի գլուխն գունդ ոսկի, և ի վերայ խաչ պատուական, և հրամայէ դալն հանապաղ շրջեցուցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն Սիւնեաց ի լիշատակ թագաւորացն Աղուանից»։ *) Անանիայի առաջին գործը եղաւ դպրատուն բանալ, որի կառավարութիւնը լանձնեց իւր աշակերտակից Բենիամինին։ Ախուհետեւ ալնքան նշանաւոր եղաւ այս վարդապետարանը, որ առաջինը համարուեց, և Ս. Սահակից ու Մեսրոպից իրաւունք ստացաւ թարգմանութիւններ ու մեկնութիւններ անելու։

Այս դպրոցը շատ ծաղկեցրեց նաև Մաթուսաղայ Գերթոզը է. դարու սկզբում, որ Սիւնեաց վարժարանի բոլոր վարդապետների գլուխ կարգուեց, ալնպէս որ կոմիտաս կաթողիկոսը, զանց առնելով կաթողիկոսարանի և Արշարունեաց վարդապետարանի բոլոր վարդապետները՝ արա մօտ ուղարկեց ուսանելու իւր եղբօրորդի Թէոդորոսին։

*) Օրբելեան ժղ.

Այս վարդապետարանից ելան երկու նշանաւոր մատենագիրներ, որոնցից առաջինը Սիւնեաց եպիսկոպոս Պետրոս իններորդն է (Ս. դարի վերջում), Բերթոլ մականունաւած *), աշակերտ Մովսէս Բերթոլաճօր։ Սա արել է Թարգմանութիւններ, և Անդոկ իշխանի Բաբիկ որդու, և Քրիստոսի ծննդեան մասին ներքոյններ։ Սրկորդը՝ Սիւնեաց քսաներկուերորդ եպիսկոպոս՝ Ստեփանոսն է, (Ը. դարում), որ զանազան Թարգմանութիւններ ունի։

Բայց Զ. դարի վերջում Սիւնեաց եպիսկոպոսների պատիւը պակասեց, որովհետեւ երբ երկու կաթողիկոսներ նստան, մինը պարսից բաժնում և միւսը լուծաց՝ Սիւնեաց եպիսկոպոս Պետրոս Բերթոլը հրամայեց իւր ժողովրդին, որ աղուաններից ստանան ձեռնադրութիւնը և մեռոնը, մինչև որ խառվութիւնը խաղաղի։

Մինչև այս ժամանակ Շաղատը եպիսկոպոսանիստ և նախաթոռ էր համարուում, սակայն այս միջոցներում, ալսինքն Յովակիմ Սիւնեաց եպիսկոպոսի ժամանակ, սրա և միւս նշանաւոր վանքերի մէջ նախաթոռութեան վերաբերութեամբ վէճեր ծագեցան։ Բայց Շաղատի տէր խոստովը, որ Գազանի սերնդից էր, ներկայացրեց Սիւնեաց տէր Աարնբերսին Բաբիկի վճիռը Շաղատի քահանաների նախաթոռութեան մասին, և սա նախազանգութիւնը հաստատեց Շաղատի Գէորդ վարդապետի վրայ։ Միևնոյն ժամանակ որոշուեց, որ Շաղատից լստով երկրորդ համարուի Շաքէն, երրորդը՝ Աղիտուն, չորրորդը՝ Մորենին և հինգերորդը՝ Ոլթը։

Սակայն շուտով Շաղատը իւր նախաթոռութեան պատիւը կորցրեց. որովհետեւ Թ. դարում արդէն բարձրացաւ Տաթևի վանքը, ուր և փոխադրուեց Սիւնեաց եպիսկոպոսարանը. իսկ իշխանանիստ լինելուց այս գիւղը դադարել էր դեռ Գ. դարից, երբ Բաբիկը նրան տուել էր Գազան պարսկին և ինքը բնակել հաւանօրէն Սիսիանում։

Տ Ա Թ Ե Ի.

Հալը Ալիշանի կարծիքով՝ դեռ հեթանոսութեան ժամանակ հաւանօրէն Տաթևի ալմեան տեղում մեհեան է եղել, որ լստով Ս. Գ. Լուսաւորչի ձեռքով եկեղեցու է փոխարկուել։ Աւանդութեան ասելով՝ այս վանքը իւր անունը ստացել է Ս. Թադէոս առաքեալի աշակերտ՝ Սատաթէից կամ Ստաթէից, որ եկել քարոզել է Սիւնիքում և ալստեղ էլ նահատակուել։ Սակայն սա հազիւ թէ ճիշտ լինի, որովհետեւ, նախ որ Ստ. Օրբելեանը, Սիւնիքի ամենանշանաւոր պատմաբանը, այդ մասին ոչինչ չէ լիշում, երկրորդ՝ լստանի չէ, որ

*) Օրբելեան գլ. Ժ և Իբ.

Ս. Թաղէտը այդ անունով աշակերտ ունեցած լինի, և երբորդ՝ որ Տաթև անունը գոյութիւն է ունեցել և՛ քրիստոնէութիւնից առաջ, որովհետև Ներսիսի Կահնապետի մէջ բարձականների հետ դասուում է նաև Տաթևեանք, որ հաւանօրէն այս կողմը տիրապետող մի տոհմ է եղել *):

Այս միայն որոշ լատնի է, որ Ներսէս Մեծի և Ս. Սահակի օրերում այստեղ որձաքարից շինուած մի անշուք հին եկեղեցի է եղել, ուր մշտապէս ճգնելիս են եղել հայ ճգնաւորներ:

Այնուհետև այս վանքի մասին ոչինչ չէ լինում մինչև Թ. դարը, երբ Սիւնեաց եպիսկոպոս Դաւիթը, որ ստացաւ մետրապոլիտ տիտղոսը և կուրծքին խաչանիշ նշան կրելու իրաւունք՝ 839 թուին Սիւնեաց փիլիպպէ նահապետից 10,000 դրամի գնեց այս վանքը և Սիւնեաց եպիսկոպոսական աթոռը այստեղ փոխադրեց: Հինգ տարուց լետոյ նորն փիլիպպէն՝ իւր սեփական Տաթև գիւղը նուիրեց այս վանքին: Սրա օրինակին հետեցին շատերը, և վանքը գնաւով հարստացաւ:

Այս միենոյն փիլիպպէ իշխանը հին եկեղեցու մօտ մի նոր գեղեցկաշէն եկեղեցի շինեց Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով, որի գլան առաջն էլ ինքը թաղուեց:

Դաւթի լաջորդներից Յովհաննէս եպիսկոպոսը, հրեշտակի ցուցմունքով, քանդեց հնակաւուց եկեղեցին և 895 թուին, առաւելապէս Աշոտ Սիւնեաց մեծ իշխանի և նրա կնոջ Շուշանի ձեռնաւորութեամբ, տասնեմէկ տարուայ ընթացքում շինեց մի հրաշակերտ եկեղեցի, հաստատելով երկու սիւների վրայ, որոնց հիմքերում ամփոփել էր Պօղոս և Պետրոս առաքեալների նշխարներից: Յետոյ շինեց Ս. Նրորորոթեան անուան նուիրած սիւն-գաւազանը, պարսպեց վանքը, հարթեց գետինը, վանքի ներքեւում դադաւարաններ պատրաստեց և զանազան շինութիւններ ու մի զբաղում կանգնեց:

Այ՛ ժամանակում վանքը հինգ հարիւրի չափ միաբաններ ունեցաւ. նրանց մէջ կային հեռու տեղերից եկած երաժշտագէտներ. ծաղկում էր վարժարանը, և բազմաթիւ էին մատենաներ ընդօրինակողներն ու զարգացրողները:

Սրա լաջորդ Տէր-Յակոբ Դունացին (918—958), Յովհաննէս Զ. կաթողիկոսի եղբորորդին և ձեռնասուներ, Զագէձորի կամ Վարարակ ջուրը գնելով՝ բերեց մինչև վանքի դէմ, և այն ամալի փշաւից տեղը տունկերով և բուսականութեամբ լցրեց:

Սա օտար նկարիչներ հրաւիրեց և զարդարել տուեց տաճարի պատերը գեղեցիկ պատկերներով:

*) Ալիշան, Սիսական եր. 224, Արարատ եր. 432.

Այս Յակոբը, ինքնաճառան լինելով՝ փոքր ինչ հպարտացաւ և ծանր համարելով զնալ Հայոց կաթուղիկոսից Կ. Միւստն խնդրելու՝ Աղուանից կաթուղիկոսիցն առաւ։ Սլա համար Անանիա կաթուղիկոսը կանչեց նրան և երբ սա չգնաց, ինքը կաթուղիկոսն եկաւ Տաթև, ուր Յակոբ քաշուելով Սիւնեաց իշխաններից՝ կաթուղիկոսի ոտն ընկաւ և թողութիւն ստացաւ։ Սակալն կարճ միջոցից նորից ապստամբեց և լարեց քաղկեդոնականներին, որի համար և Անանիա կաթուղիկոսը կրկին եկաւ Տաթև։ Սակալն Յակոբը փախաւ Բաղաց բերդը։ Կաթուղիկոսը սաստիկ բարկանալով... աւերեց քանդեց ալնտեղը և սլարաշար չեղովիւք կապեալ... վերադարձաւ իւր աթոռը։

Յակոբի մահից լետոյ Անանիա կաթուղիկոսը նորից եկաւ Տաթև, հրամայեց ժողովել կրօնաւորներին և վերականգնել վանքը։ Այս անցաւ Կապան, ուր երկրի իշխանի Զուանշիբի որդի Վահանին ձեռնադրեց եպիսկոպոս, որ լետոյ կաթուղիկոս էլ դարձաւ։

Սրան լաջորդեցին մի քանի եպիսկոպոսներ, որոնց ջանքը եղաւ շատացնել վանքի կալուածները և պայծառացնել տաճարը։ Եւ իրաւի, Յովհաննէս եպիսկոպոսի ժամանակ (1006—57), ոչ միայն մետրապոլիտական պատիւը, որ Անանիան վերցրել էր Յակոբի ապստամբութեան պատճառով, վերադարձնուեց, այլ և վանքը զարդարուեց զանազան զարդերով, մեծամեծ սպասներով և զեղեցիկ կարգերով։ Եցուեց սրազմութեամբ կրօնաւորօք, անլաղթ փիլիսոփալիւք և աննման երաժշտօք և բանիբուն վարդապետօք և աստուածազգեաց ճգնաւորօք, նաև լոգնապատիկ արհեստաւորօք։ և էր ալնուհետև տեսանել զտունն զայն իբր զմալրաքաղաք բազմաժողով. քանդի և շինեալ կալր բազմութիւն երդոց և ամբոխութիւն իբրև հազար արանցօ։ (Սիսական, Եր. 229—30)։

Սակալն երկար չտեց ալս ծաղկած վիճակը, որովհետև շուտով Ատրպատականից իսմայելացիները լարձակուեցան Տաթևի վրայ՝ երբ Յովհաննէս եպիսկոպոսը բացակայ էր։ Միաբաններից շատերին սպանեցին, վանքը կողոպտեցին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին փալատով լցրին և կրակ տուին։ Կամեցան սքանչելի սիւնն էլ կործանել, բայց հրաշք տեսնելով՝ չհամարձակուեցան, ինչպէս և մեծ, առաքելոց եկեղեցուն էլ ձեռք չտուին, այլ միայն խցերն ու սեղանատունը քանդեցին և աւարելով՝ հեռացան զնացին։

Յովհաննէս եպիսկոպոսը, որ ալս ատպատակի ժամանակ բացակայ էր վանքից, վերադառնալով աւերածի տեղը՝ ձեռնարկեց վերանորոգել կործանուածները և զրեթէ նորից շինեց Ս. Գրիգորի եկեղեցին, աւագ կամարի սեան գլխում թաղցնելով Լուսաւորչի աջի մի

մասը, որը լեռով Ստեփանոս Օրբելեանը կրկին նորոգութեան ժամանակ գտաւ: Շինեց նաև մեծ եկեղեցու հարաւային դրան առջև երկար գաւիթ միաբանների հանգստեան համար և այլն:

Նրա լաջորդ Գրիգոր եպիսկոպոսը, (1057—1115) զանազան շինութիւնների հետ միասին շինեց նաև ստուն սրբաշէն և ի վերայ սոցա եկեղեցի մի զմբեթաւոր, գեղեցկալարմար լանուն Սըրբուհով Աստուածածինն. և էր նա իբր զխաճանց բարձր, որ հալէր ի վերայ վանացն, և ի չորեսին կողմանս յօրինեաց գաւիթս, բայց լառաջի կողմն բարձրաբերձ սեամբք շինէր՝ սրահս վալելուչ՝ իբր քաղցր հովանոցո:

Գրիգորին լաջորդեց Ստեփանոս եպիսկոպոսը, որի ժամանակ պատահեց Գանձակի մեծ երկրաշարժը 1138 թուին, երբ Տաթևի եկեղեցու զմբէթը թռաւ և ընկաւ Ս. Գրիգոր եկեղեցու և գաւթի վրայ ու նրանց էլ քանդեց: Տիրող շփոթութիւնների պատճառով, — երբ Բաղաց թագաւորութիւնը վերջացաւ, Բաղաբերդը առնուեց (1170), որի ժամանակ աւար առնուեցան և Տաթևի եպիսկոպոսարանի և վանքի սպասներն ու 10,000 զրքերը՝ — Տաթևն աւերակ դրութեան մէջ մնաց մինչև ժը. դարի վերջը, ալսինքն մինչև Զաքարեանց զօրանալը, երբ Ստեփանոս եպիսկոպոսը, Գրիգոր Մեղրացի եպիսկոպոսի որդին, վանքը նորոգեց և զմբէթը նորից կանգնեցրեց:

Սրան լաջորդեց իւր քեռորդին աէր Սարգիսը, որ նստաւ Նորափանքում, իսկ նրա հօրեղբորորդի Յովհաննէսը Աթմամարի եպիսկոպոսից ձեռնադրուելով՝ նստաւ Տաթև. և ալսպիսով Սիւնեաց եպիսկոպոսութիւնը երկուսի բաժանուեց, որ տեւեց մինչև ժգ. դարի վերջը, երբ միապետեց Օրբելեան Ստեփանոս պատմիչը:

Տէր Յովհաննէսի լաջորդ Հալրապետ եպիսկոպոսի ժամանակ, երբ վերանորոգում էին Տաթևը՝ գտնուեց հիւսիսային կողմի առաջի խորանի վերև մի գաղտանոց, որի մէջ կալին ամբերք անհուն սըրբութեանց և նշխարաց առաքելական, հալրապետական և մարտիրոսական, յորում և աստուածընկալ խաչն Բաբգնեանո:

Սրա ժամանակ կիլիկիայի Լևոն Բ. թագաւորը նուէր ուղարկեց տերկնածեմ եկեղեցւորս սեղանի համար մետաքսեալ զղեստ, խաչ, սկիհներ և այլն:

Ստեփանոս Օրբելեան լաջորդելով Հալրապետ եպիսկոպոսին և միացնելով Սիւնեաց երկուսի բաժանուած եպիսկոպոսական աթոռը՝ երրորդ անգամ վերաշինեց Ս. Լուսաւորիչ եկեղեցին և գտնելով Ս. Գրիգորի նշխարները սի փոքրիկ սնդուկ փալտեալ՝ կուպղեալ և մատանեալ կապարեալ կնքով՝՝ գարձեալ դրեց միևնոյն խորանի մէջ, մի գաղտնի տեղ:

Ստեփանոս Օրբելեանը նշանաւոր եղաւ և նրանով, որ զրեց «Սիւսական նահանգի պատմութիւնը», որով մոռացութիւնից ազատեց Սիւսիքի անցեալը: Մինչդեռ նրա աւելի մօտակալ պատմութիւնը մնաց բաւական անորոշ:

ԺԴ. դարի վերջում նշանաւոր եղաւ ալստեղ Յովհան Որոտնեցին, որ շինեց զանգակատունը և բացեց վարդապետարանը, ուր ուսաւ և ծաղկեցաւ նշանաւոր աստուածաբան և մատենագիր Գրիգոր Տաթևացին: Սրա ինքնաձեռագիր Աւետարանը մինչև հիմա էլ պահոււմ է վանքում, փաթաթուած նրա քոյր Լուիսիմէի ասղէնկար ծածկովթով:

Սրա ազգական Աւաքել եպիսկոպոսը շինեց եկեղեցու հարաւային կողմի դաւիթը:

ԺԵ. դարի սկզբում վանքը աւերեցին Լանդ-Քամուրի զօրքերը, իսկ նրա անշարժ կալուածները գրաւեցին շրջակա մահմետական կալուածատէրերը: Թէպէտ Սիմէօն Անգեղակոթեցի եպիսկոպոսը գնաց պարսից շահի մօտ և հրովարտակ ստացաւ վերադարձնելու վանքին իւր նախկին կալուածները՝ սակայն ճանապարհին սպանուեց մահմետականներից: Սրա օրինակին հետեւեց Յովհաննէս Շնաթաղցին, որ նոյնպէս գնաց շահի մօտ և ստացաւ վերահաստատիչ հրովարտակ, սակայն վերադարձին մեռաւ թաւրիղում:

ԺԵ.—ԺԶ. դարերից շատ քիչ տեղեկութիւն է մնացել Տաթևի մասին: Յայտնի է, որ ԺԵ. դարում Տաթևի վանքը բարձիթողի էր արուած: Այս դարի երկրորդ կէսին սկսում է վերանորոգուել, զլիսաւորապէս Ներսէս եպիսկոպոսի ջանքով, որ ուղարկուած էր Փիլիպպոս կաթողիկոսից: Նա բարեկարգեց վանքի տնտեսական վիճակը և շինեց Տաթև գիւղի եկեղեցին: Սրանից լետոյ նշանակուեցան մի շարք եպիսկոպոսներ, որոնք մի առանձին նշանաւոր գործ չարին: Միմիայն Աստուածատուր Մըղմըզ-օղլին հարստացրեց վանքը նուէրներով և ձեռագիրներով: Սակայն շուտով սրա լաջորդ Յովհաննէս Տաթևացու ժամանակ պարսիկները կրկին լարձակուեցան վանքի վրայ, սպանեցին այս եպիսկոպոսին և թալանեցին վանքը: Սրա լաջորդ Մինաս Շնաթաղցի եպիսկոպոսը նորից վերանորոգեց, իսկ սրա երկրորդ լաջորդ Աբրահամ Աստապատեցին, Սիմէօն կաթողիկոսի (1743—1780) ժամանակակիցը, նորից ծաղկեցրեց վանքը և շինեց 16 նոր խցեր:

Աբրահամի աշակերտ Յովակիմ եպիսկոպոսը շարունակեց շինութիւնները և Գրիգոր Տաթևացու դամբարանը կանգնեց: Սակայն նրա ժամանակ, 1796 թ. Աղա Մահմատ խանը քարուքանդ արեց վանքը և ցրուեց միաբաններին: Պէտք է ենթադրել, որ զրանից

լետով վանքը երկար ժամանակ մնաց աւեր դրութեան մէջ, մինչև Ռուսների տիրապետութիւնը։ Նոր նշանակուած Մարտիրոս եպիսկոպոսը կարողացաւ կառավարչապետ Ռոտլիկից և Երմոլովից հրաման հանել վերադարձնելու վանքին նրա անշարժ կալուածները և 1820 թուին սկսեց վերանորոգել Տաթևը։ Սակայն որովհետև ալս եպիսկոպոսը ռուսների կողմնակից էր համարոււմ, ուստի և պարսկական պատերազմների սկզբում պարսիկները թալանեցին վանքը և եպիսկոպոսին էլ գերի տարան Թաւրիզ, ուր պահեցին 15 ամիս։ Պատերազմը վերջանալուց լետով, 1827-ին նա վերադարձաւ Տաթև, և դարձեալ սկսեց բարեկարգել վանքը, մանաւանդ նրա տնտեսական վիճակը և մեռաւ 1830 թուին։

1837 թ. վերացուեց Սիւնեաց մետրապոլիտութիւնը, և ալս ահագին նահանգը դարձաւ Երեւանեան թեմի մի մասը, կազմելով մի քանի լաջոպոլիտներ։

Տաթևում ամփոփուեց Ջանգեղուրի լաջորդութեան կառավարութիւնը, և նրա վանահայրերը միաժամանակ համարոււմ են և Ջանգեղուրի գաւառի լաջորդներ։ Այժմեան լաջորդն է արժ. Գրիգորիս վ., որ եռանդով շարունակում է իւր նախորդի ժամանակ ակտուած դանգակատան շինութիւնը։

ՍԻՍԻԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆ.

Սիսիանը, գլխաւորապէս պարսկական տիրապետութեան ժամանակ, կառավարուել է մելիքներով, որոնք լաջորդել են միմեանց որդոց որդի, Իշխանութիւնը ժառանգել է միշտ աւագ որդին և կրել մելիք տիտղոսը, մինչդեռ միւս որդիները կոչուել են բէկ, Մելիքների ձեռքումն էր գաւառի ներքին կառավարութիւնը։ Նրանք էին նշանակում և հաւաքում հարկերը, նրանք էին վճռում դատատանական վեճերը, և կռիւների ժամանակ նրանք էին ղինում իրենց զիւղացիներին և նրանց գլուխն անցած՝ կռիւ գնում։ Գրաւոր օրէնքներ, դատարան, պարապման որոշ ժամեր՝ բոլորովին չեն եղել։ Սովորութեան իրաւունքը և մելիքի հաճուքը միշտ գերակշռող ուժ են կազմել։

Սիսիանում, որքան լալտնի է, տիրապետել են նախ Սաֆրազ-բէկեանների և ապա Մելիք-թանգեանների տոմարը, որոնք միմեանց հետ բաւական ընդհարումներ են ունեցել։

Այս երկու տոմարից էլ ալժմ ժառանգներ կան. առաջինի՝ Զիլֆիդար-բէկը, որ բնակում է Ղարաքիլիսա գիւղում, իւր բաւական դեղեցիկ, երկարկանի և եւրոպական ճաշակով զարդարուած բնակարանում, իսկ երկրորդից՝ Կարապետ-բէկը, Բռնակոթում, նախ-

կին մեկիքների բնակարանում: Ես եղալ այս երկուսի մօտ ես, և նրանք ամենայն սիրով պատմեցին իրենց դիտեցածները իրենց նախնիքների վերաբերութեամբ և ցույց տուին նրանցից մնացած հրովարտակներն ու թղթերը:

Սակայն զօրախտաբար պէտք է ասել, որ նրանց պատմածները շատ կցկտուր էին և միմեանց հետ չեն կապում: Համագիւղացի ծերունիների պատմածներն էլ արնքան չեն լրացնում նրանց տուած տեղեկութիւնների թերին: Այնպէս որ շատ զօռար է փոքր ի շատէ լրիւ և ամիոփ պատմութիւն տալ: Սակայն ցանկանալով գտնէ մինչև այժմ մնացած փաստերը ազատել մոռացութիւնից՝ ես աւելորդ չհամարեցի արձանագրել այստեղ, լուսալով որ ապագային թերևս նորանոր նիւթեր կը գան լրացնելու և լուսարանելու: Հայ մեկիքների անքան հետաքրքիր պատմութիւնը:

Մեկիք-Սաֆրազեանների նախահայր համարում է Մեկիք-Նաֆրազը, որ իշխել է Անգեղակոթում: Սրա մօտ 1699 թուին խորալէլ Օրիի թելադրութեամբ հաւաքուեցան շրջակայ գիւղերի 9—10 տանուտէրները, խորհրդակցելու պարսից բռնութիւնից ազատուելու հնարների մասին:

Սրան լաջորդեցին Մեկիք-Ամիրխան, և ապա Մեկիք-Նարին, որոնց մասին ոչինչ չալտնի չէ: Միայն վերջինիս որդի և լաջորդ Մեկիք Սաղաթի մասին Հայր Զամչեան պատմում է, թէ Նախիջևանի Հէլտար-խանը անհիմն մեղադրութեամբ 1749-ին սպանեց շատ հալ իշխաններ, որոնց մէջ և սրան: Սրա գերեզմանը, ժառանգների ասելով՝ այժմ գտնւում է Նախիջևանի Ս. Աստուածածնի Երեք-խորան եկեղեցում:

Մեկիք-Սաղաթին լաջորդեց նրա որդին, Մեկիք Սաֆրազ երկրորդ, որ Ազուլեցիներին ու Ղազանչիներին առաջնորդեց Շուշի գաղթելու, բայց ինքը մնաց Անգեղակոթում: Սա լաճախ լինում էր նաև Բռնակոթ, ուր հետզհետէ բարձրանում էր Մեկիք-Փանգեանների տունը:

Կարապետ Փանգեանի ասելով այս տոհմի նախահայրը եղել է Մեկիք-Ստեփանը, որ Անիում զօրապետութեան պաշտօն ունենալով՝ վերակոչուել է Մեկիք-Սարգար: Յալտնի չէ, թէ Յրը և Բնչ պատճառներով սա գաղթել է Բռնակոթ:

Սրա սերնդից նշանաւոր է եղել Մեկիք-Փանգի Ա., որի անունով և տոհմը Մեկիք-Փանգեան է կոչուել: Սրա ժամանակ մի թիւրք խումբ լարձակում է Բռնակոթի վրայ և թալանում, միանգամայն վիրաւորելով և Մեկիք-Փանգու հօրը: Մեկիք-Փանգին լեռ է առնում գիւղացուց իւր նուիրած եղը, ինքը հեծնում, մի ձիու վրայ

էլ վիրաւոր հօրը զնուժեալ փախչում է Տաթև: Այստեղ հալըր վախճանուում է: Մեկիւք-Քանդին մորթում է իւր միակ եղը, հոգու հաց տալիս և ապա անցնում Շնչէր, ուր մնում է մինչև որ Բռնակոթը խաղաղում է: Սակալն կարճ միջոցից լետոյ նորից խռովութիւններ են բարձրանում, որովհետև մեկիւքի եղբօրորդի Մանուշարը մի թուրքի կին է սիրելիս եղել: Թուրքերը այս իմանալով՝ լարձակուել են մեկիւքի տան վրայ, սակալն սա փախել և թաք է կացել Տէր-Ստեփանի թոնրում: Եւ երբ թուրքերը եկել են ալղտեղ որոնելու մեկիւքին՝ քահանայն խաչը ձեռին դուրս եկել նրանց առաջ և հաւատադրել է, թէ մեկիւքը իւր տանը չէ:

Մի ուրիշ անգամ էլ սոյն այս մեկիւքի եղբայր Փանուսն (Ստեփան) է կամեցել Սաֆրազէկեանների հարսին առեանդել: Սրա աղաղակներին վրայ է հասել Սաֆի քաւորը և դաշույնը խրել Փանուսի փորը: սա՝ դաշույնը փորին կամեցել է փախչել, բայց Շէտ Ատին փայտով խփել է նրան և գետին գլորել: Մեկիւք-Քանդի Ա. այս իմանալով՝ կամեցել է կրկին փախչել, սակալն Սաֆրազէկեան Նազարը գնդակահար է արել նրան: Նա գլորուել ընկել է ալղալիսի մի տեղ, ուր մի նոր սպանած դալ է եղել ընկած, որին և գրկել է ու մեռել: Այս պատճառով էլ Վեյլիսը տրտոց է կոչւում:

Մեկիւք-Քանդի Ա-ի արին գիժում է Շուշու Իբրահիմ խանին, զանգատուում նրան իւր ամուսնու սպանութեան մասին և խնդրում իւր որդի Քանդուն մեկիւք հաստատել: Իբրահիմ խանն էլ կատարում է նրա խնդիրը:

Այս ժամանակ Մեկիւք-Սաֆրազին լաջորդած է եղել Մեկիւք-Դաւութը որ Մեկիւք-Քանդեաններից վրէժ առնելու համար գնում է Նախիջևան՝ խանի մօտ և մի անգամ լարձար առիթ գտնելով՝ գալիս է Բռնակոթ և Մեկիւք-Քանդեանների տունը կրակ տալիս:

Մեկիւք-Քանդի Բ. վերադառնում է Շուշուց, և տեսնելով իւր հայրենական տունը կրակ տուած՝ լարձակուում է Սաֆրազէկեանների տան վրայ, աւերում և նրա քարն ու գերանները բերում իւր համար նոր տուն շինում:

Այնուհետև Մեկիւք-Քանդին լարում է ռուսների կողմը և մասնակցում ռուս պարսկական պատերազմներին, որից լետոյ Պարսկաստանից եկած գաղթականներից բերում բնակեցնում է Ուզ, Աւելու, Մաղրա, Քաղազիւղ, Շաղատ, Անդեղակոթ և Բալաք գիւղերը:

Այնուհետև իւր ուշքը դարձնելով ներքին բարեկարգութիւնների վրայ՝ Մեկիւք-Քանդի Բ. շինում է Որոտնայ կամուրջը, որ ձգւում է համանուն գետի վրայ, Որոտն բերդի մօտ, ինչպէս և

Անգեղակոթի կամուրջը: Բացի արանցից շինում է նաև մի քար-
վանասարայ *): Արիւկլու լեռան վրայ:

Նա է շինել նաև Բռնակոթի եկեղեցու գաւիթը, ուր և թաղ-
ուած է: Սա ծերութեան օրերում նուիրել է Տաթևի եկեղեցուն
40 դեռնատին հող:

Մելիք-Քանգի Բին լաջորդում է եղբայրը, Մելիք-Ղուկասը.
սակալն երկու տարուց լետոյ ուսմանը վերջացրին մելիքութիւնը:


Մելիք-Ղուկասի որդին, Կարապետ բէկը, ալժմ կենդանի է:
Սա ժողովրդի մասնակցութեամբ շինել է Բռնակոթի նախկին Հալոց
ձխական դպրոցը, վերանորոգել է Արիւկլու լեռան քարվանսարան
և Որոտնայ կամուրջը: Իսկ Մելիք-Սաֆրաղեան տոհմի մելիքու-
թիւնը վերջանում է Դաւիթով: Նրա որդին էր Իսկանդար բէկը
որից ծնուած է Զիլֆիզար-բէկը (ալժմ կենդանի):

* *

Մելիք-Քանգեանների մելիքական տոհմը դեռ մինչև ալժմ
էլ կանգուն է, միայն մի քանի անգամ վերանորոգութեան է ենթար-
կուել: Սա սովորական տներին նման է, միայն աւելի մեծ է և
ընդարձակ բակ ունի:

Մելիքների հագոստը պարսից տիրապետութեան ժամա-
նակ այս էր. ալըշի (այսինքն մի թելը կապոյտ, մինը կարմիր
կտորից) չապիկ, ալըշի կարմիր փոխան. մահուդի թումպան (ան-
դրաւարտիք), ալխալուղ (ալխատի, այսինքն թեքը կոնկաժ և երկար
կախ ձգած.), Պէտք է տսել, որ միշտ, թէ ամառ, թէ ձմեռ, երկու
ալխալուղ էին հագնում, միմեանց վրայ. ներքինը չթից, իսկ վրա-
ինը՝ հզդի զէադակից (լաստիկի նման մի կտոր էր, որի ար-
շինը կարծենար 2 ր.): Ալխալուղի մէջքին կապում էին երկար
գօտի: Սրա վրայից՝ չուխայ, երկար թեքերով: Ձմեռը երկուսն էին
հագնում, բրդէն տակը՝ մահուդինը՝ վերան: Ձմեռը որպէս վերար-
կու առնում էին բիրոս մէ: Սա կարում էր բրդեայ կտորից
և վարդապետների փարաջի ձևն ունէր, միայն թեքերը նեղ էին
և իջնում էին մինչև ոտները: Հագնելիս թեքերը վեր էին քաշում
և մի ձեռքը միսի թեքի մէջ կոխում, որ տաք մնայ: Թեքերի
կոնաստակից բացուածք էլ կար, որպէսզի տաք ժամանակները ձեռ-
ները ալդ տեղերից անց կացնեն և թողնեն թեքերը կախ ընկնելու:
Օձիքի մօտ պալթա — ժապաւէն կար, որ բկի տակ հանգուց էին
ձգում:

*) Այս շինութեան համար ուսաց կառավարութիւնից 1845
թ. Աննայի ժապաւէնով ոսկէ մեդալ է ստացել:



ՏԱԹԵՆԻ ՉՈՐԸ ՈՐՈՇԱՆՑ ՎԱՆԵՆԻ ԿՈՂՄԻՑ.

Գլխներին ծածկում էին բուխարա—երկար փափախ։ Ոտներին հագնում էին գուլպա և սև ջօշեր, իսկ ձի հեծնելիս՝ չէաքձալ։ Ծերուհի Կարապետ բէկը և ուրիշ ծերունիներ ալսպէս էին նկարագրում Մելիք-Փանգի Բ.-ի կեսանքը, որ կարող էր գաղափար տալ ընդհանրապէս մելիքների կեանքի մասին։

Առաւօտները նա վեր էր կենում վաղ, ժամը 6-ին, և անմիջապէս թէլ էր խմում ու հաց ուտում։ Յետոյ մատուցանում էին կերակուր (միշտ մի տեսակ), որ սովորաբար լինում էր կամ խորոված, կամ փլաւ և կամ բոլբոջ։ Հացը բաց էր անում օդիով և վերջացնում էր զինիով։ Այս նախաճաշիկից լեռոյ դուրս էր գալիս գիւղում շրջելու, և ուր որ մի գանգատաւոր պատահէր՝ անմիջապէս՝ տեղն ու տեղը դատը կըկտրէր։ Ապա կէս օրին մօտ դառնում էր տուն և սկսում էր սաղմոս քաղել մինչև կէսօր, երբ ճաշի էր նստում, միշտ սեղանակից ունենալով մի քահանայ և մի քանի ուրիշ մարդիկ։ Ճաշին լինում էր սովորաբար մի և կամ երկու տեսակ կերակուր, իսկ զինի առատութեամբ։ (Տարեկան 8000 շիշ)։ Ճաշից լեռոյ երկու ժամ քնում էր և ապա նորից, կամ իւր բնակարանում և կամ գիւղի փողոցներում, դատ էր կտրում։ Երեկոները միշտ գնում էր եկեղեցի, ուր առանձին և պատուաւոր տեղ ունէր։ Տուն վերադառնալով՝ թէլ էր խմում, անեցիկների և կամ հիւրերի հետ նարդի խաղում և ապա ընթրում, ուտելով սովորաբար մի տեսակ կերակուր, (ընդհանրապէս՝ ճոռով փլաւ) ու անմիջապէս օնկեսցէտ էր անում ու պառկում քնելու։

Սովորաբար որսի չէր գնում, որովհետև որսորդութեան լարմար տեղեր չկային։ Բայց երբ հարկաւորում էր օրնէ տեղ գնալ՝ նրա ձիւ լետեկի տանում էին մի կամ մի քանի ձի, որ ճանապարհին եթէ կամենայ, փոխէ։ Նրան հետեւում էին մի քանի հետի և ձիաւոր ծառաներ, զինուած, որոնցից մինը տանում էր մելիքի հրացանը, իսկ մելիքը կրում էր միայն կեռ թուր։

Առաւելապէս կիրակի օրերը հաւաքւում էին նրա դռանը շքր-ջակալ գիւղերից զանգատաւորներ, որոնց դատը նա կտրում էր իւր հաճոյքի և հասկացողութեան համեմատ։

Թէ Սաֆրազբէկեան և թէ Մելիք-Փանգեան մելիքները ենթարկուել են կամ Նախիջևանի և կամ Շուշու խաներին. նրանց պարտականութիւնն է եղել—1) չահի կամ խանի պատերազմ գնալիս՝ իրենց վիճակում իւրաքանչիւր տնից մի մարդ զինուորել և նրանց գլուխն անցած՝ գնալ օգնութեան։ 2) իւրաքանչիւր տնից մի ոսկի (մօտ երեք բուրլի) հաւաքել և ուղարկել խանին, որպէս չահին հասնելի հարկ։ 3) Մելիքի որդիներից կամ տնեցիներից մինին ու-

դարկել խանի ղռանը մի առժամանակ ծառայելու, և 4) Նշանաւոր տօներին խանին ընծաներ տանել:

Մեւրքները ժողովրդից ստանում էին—

1) Տասանորդ՝ հացահատիկներից և խոտից:
 2) Իւրաքանչիւր տնից մի ոսկի, որ խանին էին ուղարկում:
 3) Իւրաքանչիւր տուն մի ժառոց էր ուղարկում մեւրքի արտերը և արօտատեղերը հնձելու, մեւրքի համար անտառից փայտ բերելու:

4) Բոլոր գութանները մի-մի օր մեւրքի համար վար էին անում:

5) Հասարակութիւնը իւր ծախսով տալիս էր մեւրքին մի ամբողջ տարի ծառայելու մի ռաճպար՝ վար անելու, մի գզիր, մի ձիապան, մի իշտալան և տան համար մի քանի ծառաներ:

6) Կանաչ գնում էին մեւրքի համար բոխի, պանձար և այլ կանաչեղէններ քաղելու, մեւրքի համար բուրդ գզելու և այլն:

7) Նաւասարդին ամեն մի տան մեծ մի խնձորի մէջ մի 20 կ. կամ մի պարսկական դրամ ցցած, մի կոլլա գինի և մի շիշ օղի տանում էր մեւրքին, նրա նոր տարին շնորհաւորելու: Սա էլ երկու եզ էր մորթել տալիս և ճաշով չիւրասիրում դրանց բոլորին:

8) Գիւղական հարսանիքների ժամանակ՝ մեւրքին տանում էին մի կուժ գինի, մի շիշ օղի, եղան սովին և պլոճիկները *):

Մեւրքները իբրև պատիժ գործ էին գնում հետեւեալ միջոցները.

1) Բազում իրենց տուգանք էին առնում:

2) Մեծում էին, ոմանց կապում էին ծառից և ճիւղոտով թափում, ոմանց մօրուքները պոկում էին, ոմանց վալը էին ձգում և կոխ տալիս. երկարամօրուք լանցաւորներից երկուսի մօրուքները միմեանց հետ հանգուտում էին և սկսում ծեծել, մինչև որ սաստիկ ցաւից ստիպուած՝ մեծ փրկանք տալին ծեծից ազատուելու:

4) Յանցաւորին ականջներից մեխում էին ծառի վրայ: (Սրբեմն ծեծի տակ ուշագնաց եղողի վրից թոկ էին գցում և քաշ տալիս, ինչպէս արել են ԅովհաննէս Մելքումեանին: Պատահում էր նոյն իսկ, որ ծեծի տակ լանցաւորը մեռնում էր, ինչպէս Մելքումեանը, բայց մեւրքը այս բանի համար պատասխանատու չէր):

5) Բանտարկում էին (գոմում կամ հացի հորում):

*) Թագաւորն էլ պարտաւորուած էր նախ քան պսակ գնալը՝ գնալ համբուրել մեւրքի և նրա կնոջ ձեռները:

ՊԸՏՄԸԿԸՆ ԸԻՆՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Տ Ա Թ Ե Ւ

Ճարտարապետը աւարտելով Տաթևի վանքի շինութիւնը՝ բարձրացել է գմբէթի վրայ, դրել է խաչը և լետու խնդրելով ներքևում եղող բանուորներից երկու տախտակ՝ բռնել է ձեռներում, համարել և ասել. «Հոգին սուրբ տալ թեա՛ւ Անմիջապէս տախտակները թևերի են փոխարկուել, և նա թռել, աներևութացել է: Այս պատճառով էլ վանքի անունը մնացել է Տալ թև—Տաթև:

ԳԱԽԱԶԱՆ-ՍԻՒՆ.

I

Առաջները, արեղային վարդապետական գաւազան տալու ժամանակ, եպիսկոպոսը պատարագելուց լետու հանդիսաւոր կերպով դուրս էր գալիս տաճարից և երեք անգամ խուռնկ ծխում այս գաւազան-սեան առաջ. Նիթէ արեղան արժանի էր վարդապետական գաւազանի՝ գաւազան-սիւնը շարժում էր, իսկ նիթէ ոչ՝ մնում էր անշարժ. Գրա համեմատ էլ վարում էր եպիսկոպոսը:

II

Լանկթամուրը կամենալով այս սիւն-գաւազանը հիմնովին կործանել՝ հրամայել է տասն զուգ գոմէշ լծել, և նրանց լծերից դուրսի փոկով կապել սիւն-գաւազանը: Նրբ գոմէշները սկսել են քաշել՝ փոկը կարուել է, բոլոր գոմէշները ձորն են թափուել, իսկ սեանը ոչ մի ջնաս չէ հասել: Այս սկազ դերձ հրամայել է, որ վանքի մէջ էլ փայտ դարսեն, վառեն, որպէսզի վանքն էլ ալրուի: Արակը վառել են զանգակատան տակ, և ահա թէ ինչու այդ օրից սկսած՝ Տաթևի զանգակները ալլ ևս լաւ ձայն չեն հանում *):

*) Լէօ. Իմ լիշատակարանը, եր. 135.

ՅՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ.

I.

Սիսիանում եղել են կապալաւորներ, որ շատ նեղութիւններ են տալիս եկել հաւերին: Սրանք տախտակները ծակել, անց են կացրել հաւերի վրէնները և երկու կողմից մի-մի մարդ նստելով՝ ման են եկել: Մի օր մի սրբաւորի կին զնացած է եղել ջրաղաց աղուն աղաւու, երբ ալդ կապալաւորներից մինը բռնել է նրան և կամեցել անպատուել: Սա ճողաղրել է նրա ձեռքից և փախել զանգատուել է Յովհան Որոտնեցուն: Սա իսկույն ձին հեծել, զնացել է պարսից Շամ շահից զօրք խնդրել, որ ալս անօրէններին կոտորէ: Երբ զօրքն ստացած վերադարձել է՝ գետն անցնելիս դիտել է, և որ զինուորի ստուերը երեսցել է ջրի մէջ՝ նրան վերցրել է իւր հետ, իսկ որինը չէ երեսցել՝ վերադարձրել է: Ապա սրանց միջոցով կոտորել և դուրս է քշել կապալաւորներին Սիսիանից, Նրանց մեծամեծներին էլ բռնել, ձգել է կաթսաների մէջ, հիփել և թափել քարերի տակ: Յետոյ, երբ կամեցել է զօրքը վերադարձնել՝ շահը նուիրել է նրան, ուստի և նա բնակեցրել է նրանց Սիսիանում: Ահա ալս զօրքերից են լառաջացել Սիսիանի ալժմեան պարսիկները:

II.

Յովհան Որոտնեցին կամենալով իւր գերեզմանը անլալտ պահել՝ մեռնելիս պատուիրել է, որ իւր մի կողքին կաթսալով կաթ, միւսին գինի թաղեն: Ուստի և ալժմ երբ Սողոմոնի են նալում որպէսդի նրա գերեզմանը գտնեն՝ տեսնում են, որ նա թաղուած է կարմիր ու սպիտակ ծովերի մէջ և չեն կարողանում գտնել:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ.

Մի անգամ, երբ Գրիգոր Տաթևացին սովորելիս է լինում Տաթևի վանքում՝ վանահայրը հրամայում է նրան, որ մի փարւով ջուր բերէ: Գրիգորը փոխանակ բերելու՝ ցոլց է տալիս բերանն ու ականջները, կամենալով հասկացնել, որ բերանն ասաց, թող ականջը չլսէ, իրեն նման սրբին չէ կարելի հրամայել: Երբ վանահայրը չբնականալով կրկնում է իւր հրամանը՝ Գրիգորը նոյնը հրամայում է իւր աշակերտակիցներից մինին, և երբ սա չէ կատարում՝ անիծում է նրան, ասելով՝ գետինն անցնիս: Իսկույն երեխան կիսով չափ մահում է գետնի մէջ: Վանահայրը անմիջապէս միջամտում է և խնդրում Գրիգորին, որ հանէ: Սա էլ կատարում է նրա խնդրը: Վանահայրը զարմացած գրում է կաթուղիկոսին Գրիգորի սրբու-

թեան մասին և սա հրամայում է, որ անմիջապէս ուղարկեն իւր մօտ: Սակայն Գրիգորը չէ գնում: Վերջապէս կաթուղիկոսը երկու վարդապետ է ուղարկում, որ տանին: Գրիգորը սրանց ներկայութեամբ կշռում է $\frac{1}{4}$ ֆունտ կրակ, գնում է մի ֆունտ բամբակի մէջ, փաթաթում է մի թղթի մէջ և տալիս նրանց և ասում. «Տարէք այս կաթուղիկոսին և աշնտեղ կշռեցէք. եթէ իրենց քաշերից մի քիչ կորցնեն՝ ես ինքս ինձ ու ինձ կը գամ: Վարդապետները վերցնում գնում են և կաթուղիկոսի ներկայութեամբ կշռում են: Նրք քաշը բոլորովին նույնն է լինում՝ կաթուղիկոսը բացականշում է. «Նա արդէն երկինք ու գետինք կշռել է, նա անշափ իմաստուն ու արդար է»:

